ԿԱՄավոր 1 ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ԿԱՄավոր 1 կենսաթոշակային ֆոնդը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկում 30.04.2013թ.-ին

Հիմնական Նպատակը

Ֆոնդի մասնակիցներին կուտակային կենսաթոշակներով ապահովումն է՝ Ֆոնդում կուտակված կենսաթոշակային ակտիվների երկարաժամկետ աճի ապահովման միջոցով:

Ֆոնդի Տեսակ

Ֆոնդը բաց, պայմանագրային, ստանդարտ ֆոնդ է:

Ֆոնդի պահառուն և մասնակիցների ռեեստրավարը

Ֆոնդի պահառուն է հանդիսանում «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ (ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 46: www.vtb.am)

Ֆոնդի ռեեստրի վարումը իրականացնում է կառավարիչ ընկերությունը՝ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ:

Ներդրումային Քաղաքականություն

Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել կայուն եկամտային արժեթղթերի մեջ ներառյալ պետական, կորպորատիվ և համայնքների կողմից թողարկված պարտատոմսերում: Ֆոնդի ներդրումները կարող են նաև կատարվել բանկային ավանդներում՝ մինչև ֆոնդի ակտիվների 20%-ը ինչպես նաև ներդրումային ֆոնդերի փայերում մինչև ֆոնդի ակտիվների 25%-ը: Բացի այդ, ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել ածանցյալ գործիքներում՝ միայն հեջավորման նպատակով: Ֆոնդի ակտիվները կարող են նաև ներառել արտասահմանանյան արժեթղթեր՝ մինչև ֆոնդի ակտիվների 50%-ը ինչպես նաև ներդրումներ արտարժույթով մինչև ֆոնդի ակտիվների 50%-ը:

Ռիսկեր

Կայուն եկամտային արժեթղթերը ունեն տոկոսադրույքի ռիսկ (պարտատոմսի տոկոսադրույքի բարձրացման դեպքում, տվյալ պարտատոմսի շուկայական գինը ընկնում է), ինչպես նաև անվճարունակության և գնաճի ռիսկեր: Ի հավելումն շուկայական ռիսկի, արժեթղթերով ներդրումները կրում են գործառնական, իրավական, քաղաքական և իրացվելիության ռիսկեր: Արտարժույթով կատարվող ներդրումները ունեն արտարժութային ռիսկ՝ արտարժույթի փոխարժեքով պայմանավորված: Այդ պատճառով, ֆոնդն ունի ռիսկերի կառավարման մշակված համակարգ, որի օգնությամբ փոքրացվում են վերոհիշյալ ռիսկերի ազդեցությունը: Բացի այդ, Ֆոնդն ունի ներդրումների կենտրոնացման սահմանափակումներ, որոնց համաձայն ֆոնդի ակտիվները սահմանված չափից ավելի չեն կարող ներդրվել 1 ընկերության, 1 բանկի կամ 1 պետության թողարկած արժեթղթերում:

Կառավարչի մասնակցության չափը ֆոնդում

12.033 % (31.10.2017թ. դրությամբ)

ԿԱՄավոր 1 կենսաթոշակային ֆոնդի պորտֆելի կառուցվածքը

Պորտֆելի կառուցվածքը ըստ աշխարհագրական և ոլորտային բաշխվածության*				
	ՀՀ	ԵՄ	ՌԴ	Ընդամենը
Պետական հատված	49.747 %	0 %	0 %	49.747 %
Ոչ պետական հատված	45.945 %	0 %	0 %	45.945 %
Ֆինանսական հատված	4.309 %	0 %	0 %	4.309 %
Ընդամենը	100 %	0 %	0 %	

* 31.10.2017թ. դրությամբ

Սակագներ

ԿԱՄավոր 1	
Կառավարչի պարգևավճար	1.8 %
Թողարկման վճար	0 %
Մարման վճար	0 % *
Պահառուի պարգևավճար	0.15 %
Միջնորդավճարների հետ կապված ծախսեր	Կախված դրանց ծավալից և բնույթից

*Օրենքով սահմանված դեպքերում, մինչև կենսաթոշակային տարիքը ֆոնդի փայերը մարելիս ֆոնդի մասնակցի հաշվից գանձվում է մարման վճար 1%-ի չափով: